

ԻՍԼԱՄԸ ԵՎ ԱՀԱԲԵԿԶՈՒԹՅՈՒՆԸ

Արաքս Փաշայան

*«Մահմեդականների մեծ մասն արմատականներ չեն,
իսկ արմատականների մեծ մասն ահաբեկիչներ չեն,
սակայն ներկայիս ահաբեկիչների մեծ մասը մահմեդականներ են,
որոնք հպարտորեն մատնանշում են իրենց իսլամական ինքնությունը» [1]:*
Բեռնարդ Լուիս

Հոդվածում լուսաբանված են միջազգային իսլամական ահաբեկչության գաղափարական արժեհամակարգի առանձին սկզբունքներ: Առանձնացված են իսլամական այն հայեցակարգերը, որոնք ծառայում են ահաբեկչության գաղափարախոսությանը: Փորձ է արվել գնահատել իսլամի և ահաբեկչության առնչության խնդիրը:

Ներածություն

Միջազգային ահաբեկչությունն այսօր ավելի հաճախ աչքի է ընկնում իր կրոնական, ավելի ստույգ՝ իսլամական բնույթով: Որքանով է իսլամն արդարացնում ահաբեկչությունը: Այս հարցի պատասխանը կախված է այն հանգամանքից, թե ինչ տեսանկյունից է փորձ արվում մեկնաբանել և կյանքի կոչել իսլամի սկզբունքները:

Միջնադարում մահմեդական իրավական-կրոնական միտքը, առանձին հայեցակարգերի մշակմամբ, որոշ չափով պարարտ հող ստեղծեց իսլամում արմատական մոտեցումների համար: Այդ հայեցակարգերն առաջին հերթին կապված են իսլամում պետական կառավարման սկզբունքի, պատերազմի և խաղաղության, ոչ մահմեդականների կարգավիճակի, մահմեդականների գլոբալ ռազմավարության և այլ հիմնահարցերի հետ: Մահմեդական իրավունքի հիմնական սկզբունքները մշակվել են իսլամի ձևավորման սկզբնական փուլում և համապատասխանեցվել պատմական այդ շրջանի իրողություններին: Դրանցից շատերը, որքան էլ ժամանակավրեպ թվան մեր տեսանկյունից, ներկայումս վերարժևորվում են մահմեդական ահաբեկիչների կողմից՝ վերաճելով տոտալ գաղափարախոսության:

Իսլամի ազդեցությունը հասարակական-քաղաքական գործընթացների վրա պայմանավորված է իսլամի արժեհամակարգով: Իսլամը խոր հիմքեր ունի մահմեդական հասարակության կյանքում և զգալի ներգործություն՝ անհատի ինքնագիտակցության վրա, իսկ հասարակության բարոյական, սոցիալական և կենցաղային կողմերը կանոնակարգում են Ղուրանը և

*շարիաթը*¹: Իսլամական սկզբունքների ներդրումը քաղաքականության մեջ առաջին հերթին ամրագրված է *շարիաթով*: Համաձայն *դին վա դաուլա* սկզբունքի՝ իսլամում կրոնը և քաղաքականությունը չեն կարող տարանջատված լինել:

1. Իսլամական միասնության գաղափարական հիմքը

Այն իրադարձությունները, որ տեղի են ունենում իսլամի ավանդական տարածման շրջաններում, թույլ են տալիս ենթադրել, որ մահմեդական երկրներին² առաջին հերթին միավորում է կրոնական ընդհանրությունը: Ձգտելով ուրվագծել իսլամական աշխարհի սահմանները՝ մահմեդական արդի հեղինակներից շատերը նշում են, որ ամբողջ աշխարհի իսլամադավան բնակչությունը³, որ ձևավորում է իսլամական ազգ՝ *ումմա* հասկացությունը, իր միասնության մեջ ներկայացնում է ողջ իսլամական աշխարհը: Հենց այսպես է ներկայացված իսլամի աշխարհը քարտեզներում, որ թողարկում են իսլամական ամենատարբեր կազմակերպությունները [2]:

Ումման բոլոր մահմեդականների եղբայրության և միասնության գաղափարն է՝ անկախ ազգային, ռասայական և սոցիալական պատկանելությունից: Իսլամական միասնության կոդմնակիցները հաճախ են վկայակոչում Ղուրանի հիշյալ այսբեր. «Եվ ամուր բռնեք այն պարանից, որն ալլահը (մեկնեց ձեզ՝ Ա.Փ.) և մի՛ բաժանվեք իրարից...» (3; 102) [3]:

XIX դարի երկրորդ կեսին իսլամական *ումմայի* սկզբունքը ծառայեց պանիսլամիզմի գաղափարախոսությանը, որ կապված է Ջամալ ադ-Դին ալ-Աֆղանիի (1839-1897թթ.) անվան հետ: Պանիսլամիզմի տեսաբանն առաջ քաշեց խալիֆայության⁴ շրջանակում իսլամական աշխարհի կրոնաքաղաքական, տնտեսական և մշակութային սերտ համագործակցության գաղափարը՝ իսլամական միասնության գրավական համարելով *ումմայի* համերաշխությունը: Ալ-Աֆղանին հակված էր կրոնականին հակադրել ազգայինը: Նրա կարծիքով՝ «մահմեդականները չգիտեն մի այլ իսկական ազգություն, բացի իրենց կրոնից» [4]:

Ումմայի սկզբունքը պաշտոնապես հայտարարվեց 1969թ. ստեղծված իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնի՝ Իսլամական

¹ Շարիաթը (արաբերեն՝ օրենք) մահմեդականների իրավական նորմերի, նրանց կրոնական, կենցաղային և սոցիալական կյանքի, վարքագծի սկզբունքների և կանոնների ամբողջությունն է: Շարիաթին հետևել նշանակում է ճշմարիտ և աստվածահաճո կյանք վարել:

² Այն երկրները, որտեղ մահմեդականները բնակչության մեծամասնությունն են, պայմանականորեն կոչվում են իսլամական կամ մահմեդական:

³ Ներկայումս երկրագնդի բնակչության ավելի քան 1.200 մլն-ը մահմեդականներ են: Բնակչության աճի ամենաբարձր ցուցանիշը մահմեդական աշխարհում է, առանձին երկրներում այն հասնում է 3,6%-ի:

⁴ Խալիֆայությունը 7-րդ դարում իսլամ ընդունած արաբների նվաճողական արշավանքների հետևանքով ձևավորված արաբամահմեդական թեոկրատ պետությունն է: Պետության առաջնորդը՝ խալիֆան (արաբերեն՝ ժառանգորդ), մարմնավորում էր ինչպես քաղաքական, այնպես էլ հոգևոր իշխանությունը: Մահմեդական իրավունքի մեջ խալիֆայությունը համարվում է կատարյալ վարչաքաղաքական կառույց, որ միավորում է իսլամական ազգին՝ *ումմային*:

կոնֆերանս կազմակերպության¹ կողմից: 1981թ. իսլամական պետությունների Մեքքայի գագաթաժողովում միաձայն ընդունված հռչակագրում տրված է *ուսմայի* սահմանումը. «Բոլոր մահմեդականները, որոնք թեն տարբերվում են լեզվով, մաշկի գույնով, բնակության վայրով, մի ազգ են. նրանց միավորում է նույն հավատքը, նրանք շարժվում են նույն ուղղությամբ, ունեն մշակութային ընդհանուր ժառանգություն, աշխարհում ունեն նույն առաքելությունը» [5]:

Իսլամական ազգ հասկացությունը վերաբերում է, առանց բացառության, բոլոր մահմեդականներին: Ազգ-պետությունների (*nation-state*) ձևավորումից հետո էլ մահմեդականները դեռևս երկու ինքնության (*identity*) կրող են՝ ազգայինի և իսլամական *ուսմայի*:

Իսլամի գլոբալ ռազմավարության մեջ իր ուրույն տեղն ունի *ուսմայի* վերջնական նպատակների խնդիրը: Մեքքայի հռչակագրում մասնավորապես նշված է. «Մեր համոզմունքն այն է, որ իսլամական ազգը, որ հաշվվում է մեկ մլրդ մարդ տարբեր ցեղերից, որոնք սփռված են աշխարհի տարբեր մասերում, տիրապետում են հսկայական ռեսուրսների և միմյանց հետ կապված են հոգևոր ուժով, կարող է ազդեցիկ դիրքեր նվաճել աշխարհում և լավագույն հավասարակշռություն ստեղծել՝ հոգուտ ողջ մարդկության» [6]:

Մահմեդականների միասնության սկզբունքը բացառիկ նշանակություն ունեցավ իսլամական աշխարհի քաղաքական ինքնագիտակցության ձևավորման հարցում: *Ուսմայի* ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել աշխարհի մեկ միլիարդից ավելի մահմեդականների միավորման գաղափարական հիմքերի, ինչպես նաև իսլամի գլոբալ ռազմավարությանն առնչվող հարցերի մասին:

2. Իսլամադավաններ և այլադավաններ

7-րդ դարում Մուհամմադ մարգարեի քարոզչության արդյունքում ի հայտ եկած կրոնական նոր գաղափարախոսությունն առաջին հերթին կոչ էր անում հրաժարվել բազմաստվածությունից՝ հոգուտ միաստվածության: Ի սկզբանե իսլամը խիստ բացասական վերաբերմունք ուներ հեթանոսների և անհավատների (*քաֆիրուն*) նկատմամբ, որոնց համար իսլամի հաղթանակից հետո այլընտրանք չկար: Նրանք կա՛մ պետք է ընդունեին իսլամը, կա՛մ՝ կյանքով հատուցեին: Այս մասին *հադիսներում*² կան Մուհամմադ մարգարեի խոսքերը. «Ես կոչում եմ ձեզ մարտնչել կռապաշտների դեմ,

¹ Իսլամական կոնֆերանսը բնութթով կրոնաքաղաքական կազմակերպություն է, որին կարող են անդամակցել միայն մահմեդական պետությունները: Ներկայումս անդամ պետությունների թիվը շուրջ 6 տասնյակ է: Կազմակերպության նստավայր-գրասենյակը Սաուդյան Արաբիայում է:

² *Հադիսները* Մուհամմադ մարգարեի և նրա համախոհների արարքների ու արտահայտությունների պատմություններն են, որոնք գրված են *խնադի* (աղբյուրագիտական շղթա) հիման վրա: Գոյություն ունեն հադիսների 6 հիմնական ժողովածուներ:

մինչև որ նրանք ասեն՝ չկա աստված բացի ավլահից»:

Ինչ վերաբերում է ոչ իսլամադավան մոնոթեիստներին՝ մասնավորապես քրիստոնյաներին ու հրեաներին (որոնք Ղուրանում հիշատակված են որպես սուրբ գիրք ունեցող ժողովուրդ՝ *ահլ ալ-քիթաբ*), ապա նրանք այլակրոնության հարկ՝ *ջիզյա*, վճարելու պայմանով փրկվեցին և մահմեդական համայնքի կողմից ստացան հովանավորյալների՝ *զհիմիների* հատուկ կրոնական կարգավիճակ (*ահլ ալ-զհիմա*): Նրանց թույլատրվեց դավանել սեփական կրոնը, երաշխավորվեց նրանց կյանքը, ազատությունը, ունեցվածքի անձեռնմխելիությունը: Ղուրանում մոնոթեիստների վերաբերյալ կա հետևյալ նշումը. «Մարտնչե՛ք գրոց մարդկանց դեմ, որոնք չեն հավատում ո՛չ ավլահին և ո՛չ էլ դատաստանի օրվան, որոնք պիղծ չեն համարում այն, ինչ պիղծ է համարել ավլահը և նրա առաքյալը, և ոչ էլ հետևորդն են ճշմարիտ հավատքի, մինչև որ նվաստացած, իրենց իսկ ձեռքով, չվճարեն ջիզյան» (9: 29): Փաստորեն, քրիստոնյաների և մնացած մոնոթեիստների ու մահմեդականների փոխհարաբերությունները միջնադարում կարգավորվեցին իսլամական իրավունքի միջոցով:

Իսլամի հաղթանակից և խալիֆայության ստեղծումից հետո իսլամը նորադարձ մահմեդականներին մղում էր աշխարհով մեկ տարածել իսլամը և ստեղծել համաշխարհային իսլամական պետություն: Համաձայն իսլամի՝ աշխարհը բաժանված է իսլամի աշխարհի (*դար ալ-իսլամ*) և պատերազմի աշխարհի (*դար ալ-հարբ*) միջև:

Իսլամի աշխարհում իսլամի օրենքներով կառավարում են մահմեդականները: Սկզբնական շրջանում իսլամի աշխարհի սահմանները համապատասխանում էին խալիֆայության սահմաններին, իսկ հետո այդպես սկսեցին կոչվել մահմեդական երկրները:

Պատերազմի աշխարհի բնակիչները մահմեդականներ չեն, այլ՝ անհավատներ, որտեղ մահմեդականներն ապրում են անհավատների տիրապետության ներքո:

Իսլամական իրական որոշ դպրոցներ առաջ քաշեցին նաև աշխարհի երրորդ տեսակի՝ *դար ալ-սուլհի*՝ համաձայնության (կամ պայմանագրի) աշխարհի գաղափարը: Համաձայնության աշխարհում ղեկավարում են ոչ մահմեդականները, որոնք, սակայն, մահմեդականների վասալներն են: Իսլամադավաններն այստեղ կրոնական ազատություններից են օգտվում և հովանավորյալ են: *Դար ալ-իսլամի* իշխանությունները *դար ալ-սուլհում* որոշակի քաղաքական իրավունքներ ունեն՝ ամրագրված հատուկ պայմանագրերով:

Համաձայն մահմեդական ավանդույթի՝ իսլամադավանները աշխարհի ոչ իսլամական հատվածի հետ գտնվում են մշտական պատերազմի

մեջ¹: Նրանք ոչ միայն ամեն կերպ պարտավոր են պաշտպանել իսլամի աշխարհին արտաքին վտանգներից, այլև շարունակական պատերազմի՝ ջիհադի միջոցով աստծո խոսքը՝ իսլամը, հաստատել ամբողջ աշխարհում, որպեսզի պատերազմի աշխարհին ի վերջո վերածվի իսլամի աշխարհի:

Այսպիսով, իսլամական իդեալը մի այնպիսի աշխարհ էր ուրվագծել, որտեղ իշխելու էր միայն իսլամը, իսկ մնացած դավանանքներն աստիճանաբար դուրս էին մղվելու: Սկսվելու էր մահմեդականների համընդհանուր տիրապետության շրջանը: Այսպիսին էր մահմեդականների գլոբալ ռազմավարությունը միջնադարում: Քանի որ իսլամը դիտվում էր որպես կատարյալ կրոն, իսկ Մուհամմադը՝ վերջին մարգարեն, ապա մնացյալ էթնոդավանական խմբերը նախևառաջ հրավիրվում էին հաղորդակից դառնալու նոր կրոնին, իսկ հետագայում՝ ընդունելու այն:

3. *Ջիհադը՝ սրբազան պատերազմի հայեցակարգ*

Իսլամական իրավունքի մեջ թույլատրվում է պատերազմի միայն մի տեսակ՝ *ջիհադը*, որի նպատակը իսլամի առաքելության պաշտպանությունն է: Դրանում շեշտադրված է շարունակական պատերազմի սկզբունքը: *Ջիհադի* հայեցակարգը (որն ամրագրված է Ղուրանով և *հադիսներով*) իսլամական իրավական դպրոցների կողմից համակարգվեց խալիֆայության կայացումից հետո: Մշակվեցին *ջիհադի* թե՛ տեսական, թե՛ գործնական կողմերը:

Ջիհադ բառը ծագում է արաբերեն *jhd* արմատից, որ նշանակում է *ջանքեր գործադրել, ճիգեր թափել, պայքարել*: Իրավական-կրոնական տեսանկյունից *ջիհադը* աստծո հավատքի նվիրյալների կողմից գործադրվող բազմաթիվ միջոցների համալիր է, որը մահմեդական համայնքի հիմնական պարտականություններից մեկն է: Աստված կների նրանց մեղքերը, ովքեր ջանացել են հանուն աստծո և դրախտ կառաջնորդի նրանց: Ղուրանում նշված է. «Դուք հավատում եք ալլահին և նրա առաքյալին և պայքարելով՝ ընծայաբերում եք հանուն ալլահի ձեր ունեցվածքն ու կյանքը: Դա երջանկություն է, եթե դուք դա երբևէ հասկանում եք» (61; 11):

Մահմեդական ահաբեկիչները, հիմնվելով Ղուրանի վրա, հավատացած են, որ իսլամի առաքելության պաշտպանությունը շահեկան գործ է: «*(Ալլահը) ներում կշնորհի ձեր մեղքերին և ձեզ կառաջնորդի դրախտ, որոնց ընդերքով գետեր են հոսում, կրնակեցնի ձեզ դրախտի այգիների հրաշալի կացարաններում: Դա մեծագույն արքայություն է*» (61; 12):

Ջիհադի մեջ ներգրավվածները մեծ առավելություններ են ունենալու թե՛ երկրային, թե՛ երկնային կյանքում: *Հադիսներում* այս մասին կա հետև-

¹ Դար ալ-հարբի հետ հնարավոր է ժամանակավոր հաշտություն միայն 10 տարով:

յալ դիտարկումը. «Ալլահը դրախտում հարյուր հանգրվան է նախատեսել նրանց համար, ովքեր կմարտնչեն իր ճանապարհին»:

IX-X դարերում *ջիհադ* հասկացությունը ստացավ նոր բովանդակություն: Ձևավորվեց *ջիհադի* բարձրագույն ձև՝ հոգևոր *ջիհադ* (կամ *մեծ ջիհադ*) հասկացությունը, որ նշանակում էր պայքար սեփական արատների և բացասական երևույթների դեմ¹: Սակայն այս հանգամանքը չէր նշանակում, որ ռազմական, այսինքն՝ *փոքր ջիհադը*, կորցնելու էր իր նշանակությունը²:

Մահմեդական արդի շրջանի հեղինակներից շատերի կարծիքով՝ *ջիհադը* «սրբազան պատերազմ» թարգմանելը ճիշտ չէ և կապված է Արևմուտքում իսլամը ոչ ճիշտ ընկալելու հետ: Նրանց պատկերացմամբ՝ *ջիհադն* ավելի տարողունակ հասկացություն է և ունի նաև հոգևոր ու խորքային իմաստ [7]: Այսօր մահմեդական իրավունքի մասնագետների մեծ մասի կարծիքով՝ *ջիհադը* մահմեդական համայնքի համար միայն պաշտպանական բնույթ ունի: Ըստ այդմ՝ *ջիհադն* ուղղված է կանխելու մահմեդականներին կամ որևէ մահմեդական պետությանը սպառնացող ագրեսիան:

Այս պարագայում ժամանակակից իսլամական ահաբեկչությունը որևէ տարբերություն չի տեսնում պաղեստինցիների դեմ իսրայելցիների գործած բռնությունների, 1980թ. Աֆղանստանում խորհրդային զորքերի ներխուժման, 1990-ականներին Պարսից ծոցի պատերազմի կամ էլ 2003թ. Իրաքի գրավման միջև: Ցանկացած ռազմական գործողություն մահմեդական բնակչություն ունեցող երկրի դեմ դիտարկվում է որպես արտաքին միջամտություն՝ ուղղված տարածաշրջանում տվյալ երկրի քաղաքական և տնտեսական շահերի ամրապնդմանը: Այսինքն՝ օտար պետությունների պայքարը *իսլամի աշխարհի* դեմ դիտվում է որպես մեկ ընդհանուր պայքարի շարունակություն: Քանի որ օտար ուժերն իրենք են ագրեսիա իրականացրել, ուրեմն նրանց քաղաքականության դեմ ուղղված ահաբեկչական գործողություններն արդարացված են: Այս հանգամանքն ամրագրված է Ղուրանով. «Պատերազմե՛ք հանուն ալլահի նրանց դեմ, ովքեր իրենք են պատերազմում ձեր դեմ, բայց բռնության մի դիմեք, ալլահը չի սիրում նախահարձակներին» (2; 186): Ապա՝ «Մզանե՛ք նրանց, որտեղ որ հանդիպեք, դուրս մղեք նրանց, որտեղից որ նրանք են ձեզ դուրս մղել...» (2; 187):

Ենթադրենք, թե *ջիհադը* հիմնավորված է, քանի որ պայքարն իսլամի և իսլամադավանների պաշտպանության համար է: Սակայն, որպես կանոն, ահաբեկիչների թիրախ են դառնում անմեղ մարդիկ, որոնք իրենց գոյությամբ չեն սպառնացել իսլամին: Այս պարագայում ահաբեկիչները խախ-

¹ XII դարի մահմեդական ռազմափոխադրումների փոխարեն, գիտնական և տեսաբան Բրն Ռուշդը (Ավեռոես) նշում է *ջիհադի* իրականացման 4 եղանակ՝ *սրտով, լեզվով, ձեռքով և սրով*:

² Ուշագրավ է, որ անգամ իսլամի կրոնափոխության, ամենախաղաղ ուղղություններից մեկի՝ սուֆիականության մեջ, բացի հոգևոր *ջիհադից* (որ ներառում է պայքարը սեփական կրքերի և արատների դեմ), ամրագրված է նաև իսլամի թշնամիների դեմ ռազմական *ջիհադի* հայեցակարգը:

տում են *շարիաթի* սկզբունքը: Անգամ օրենքով թույլատրված պատերազմի դեպքում իսլամը խստորեն արգելում է սպանել կանանց, երեխաներին ու ծերերին: Բացի այդ, ահաբեկիչները շրջանցում են *շարիաթի* մեկ այլ սկզբունք՝ *ջիհադը* թույլատրելի է միայն մահմեդական համայնքի հոգևոր առաջնորդի՝ *իմամի* կոչի դեպքում:

Մահմեդական ահաբեկիչները հավատացած են, որ իրենք իրավունք ունեն բռնություն գործադրել ոչ մահմեդականների նկատմամբ: Նրանց բառապաշարում քրիստոնյաներին որպես հոմանիշ օգտագործվում են՝ «խաչակիրներ», «գաղութարարներ», «անհավատներ» բառերը: Որպես *մուսլիմ* (հավատացյալ) և *մուսլիմ*, որ բառացի նշանակում է աստծուն հնազանդ, մահմեդական ահաբեկիչներն իրենց ձգտում են հակադրել աշխարհի ոչ իսլամադավան բնակչությանը՝ «անհավատներին» (կամ *գյավուրներին*²), որոնք մերժում են ավահին: Ճիշտ է, իսլամական իրավունքում *քաֆիր* ասելով նկատի է առնվում անհավատ, անաստված մարդը, սակայն Մուհամմադ մարգարեն Ղուրանում անհավատ է անվանում նաև քրիստոնյաներին: Այս առումով ուշագրավ է հետևյալ այսբը. «*Նրանք արդեն անհավատ են, որ ասում են, թե Աստված՝ Մարիամի որդի Մեսիան է...*» (5; 19):

4. Իսլամական ահաբեկչությունը պատմական համատեքստում

Իսլամի պատմության ամենավաղ շրջանում ահաբեկչությանը դիմեցին *խարիջիները* հետևորդները խալիֆայության առաջին կրոնաքաղաքական կուսակցության, որ ձևավորվեց չորրորդ բարեպաշտ խալիֆա Ալի իբն Աբի Տալիբի (654-661)³ և նրա ընդդիմադիրների միջև իշխանության շուրջ ծագած հակամարտության ընթացքում: 657թ. Սիֆֆինի հայտնի ճակատամարտից հետո *խարիջիները* դեմ դուրս եկան թե՛ Ալիին, թե՛ նրա հակառակորդներին: 661թ. Քուֆայի մզկիթը մտնելու պահին *խարիջիներից* մեկի հասցրած հարվածից մահացավ Ալին: Այս սպանությունը դարձավ նախադեպ և հետագայում մեկ անգամ չէ, որ այս մեթոդը կիրառվեց արաբական խալիֆայությունում քաղաքական հարցերը լուծելու համար [8]:

Խարիջիների կարծիքով՝ ցանկացած ճշմարիտ մահմեդական կարող է համայնքի ղեկավար լինել այնքան ժամանակ, քանի դեռ վայելում է *ուլմայի* լիարժեք վստահությունը: *Խարիջիները* աստվածային արդարությունն իրականացնելու համար պատժում էին այն բոլոր մահմեդականներին,

¹ Արաբերեն *մուսլիմ* բառը ծագում է իսլամ (արաբերեն՝ հնազանդություն) ձևից: Հայերենում մուսլիմը թարգմանվում է մահմեդական, որին որպես հոմանիշ օգտագործվում են նաև մուսուլման և իսլամադավան ձևերը:

² *Գյավուրը* արաբերեն անհավատ՝ *քաֆիր* բառի թուրքական ձևն է: Արաբերենում *քաֆիր* ասելով նկատի է առնվում անշնորհակալ մարդը: *Քաֆիրը* երախտապարտ չէ աստծուն՝ իրեն ուղարկված հայտնությունների համար (Ղուրան 5; 7-18):

³ Ալին Մուհամմադ մարգարեի հորեղբոր որդին էր և փեսան՝ ամուսնացած նրա դստեր՝ Ֆատիմայի հետ:

որոնց համարում էին անհավատներ: Այսօր էլ *խարիջիների* համայնքներում մեղավորների նկատմամբ դեռևս կիրառվում են կրոնական պատիժներ, որոնցից է թաղման արարողության մերժումը [9]:

Միջնադարում մահմեդական առանձին հոսանքներ, կրոնական մոլեռանդությամբ ներշնչված, օգտագործեցին ահաբեկչության և ինքնաահատակության մեթոդը՝ որպես նպատակին հասնելու արդյունավետ միջոց: Դրանցից էր XI դարի վերջին հիմնված *հաշշաշիների* աղանդը, որ ծագում էր շիական ծայրահեղ ուղղություններից մեկից՝ իսմայիլականությունից¹: Եվրոպական լեզուներով *assassin* բառը, որ նշանակում է մարդասպան, *հաշշաշ* (արաբերեն՝ թմրամոլ) բառի աղավաղված ձևն է: Նրանք իրենց անվանում էին *ֆիդայիներ*: *Ասասիների* պայքարի հիմնական ձևն ահաբեկչությունն էր, որ իրականացնում էին աղանդի անդամները՝ *ֆիդայիները*², հատուկ պատրաստվածություն անցնելուց հետո: Նրանց մեջ սերմանվում էին հզոր կամք, համբերատարություն և դիմացկունություն: Ահաբեկիչները վստահ էին, որ բացահայտ մահվան են գնում՝ դրախտում հայտնվելու պայմանով: Առանձին աղբյուրների վկայությամբ՝ նրանք հաշիշ էին օգտագործում, որը նրանց գիտակցության մեջ ծնում էր դրախտի այգիների և վայելքների պատկերներ՝ մղելով ինքնաահատակման: Սակայն, ի տարբերություն ներկայիս ահաբեկիչների, նրանք անմեղ մարդկանց չէին սպանում: *Հաշշաշիների* թիրախ էին դառնում քաղաքական, ռազմական և կրոնական գործիչները, շատ հաճախ՝ հենց մահմեդականներ: Բացահայտվելու դեպքում մարդասպանները հոժարակամ վերջ էին դնում նաև իրենց կյանքին: *Հաշշաշիների* գործելակերպն ու մտայնությունները բազում աղերսներ ունեն մերօրյա մահմեդական ահաբեկիչների հետ [10]:

Հանուն սուրբ գաղափարների ինքնազոհաբերության տեսությունը մահմեդական իրականության մեջ չկորցրեց կենսունակությունը: Այս առումով ուշագրավ է XX դարի սկզբին հիմնված մահմեդական արմատական կրոնաքաղաքական կազմակերպության՝ «Մահմեդական եղբայրների» («ալ-Իխուան ալ-Մուսլիմուն»)՝ հերոսական մահվան պատրաստ լինելու հայտնի կարգախոսը՝ «Ալլահը մեր նպատակն է, մարգարեն՝ մեր առաջնորդը, Ղուրանը՝ մեր սահմանադրությունը, ջիհադը՝ ճանապարհը, *հերոսական մահը հանուն ալլահի՝ մեր բարձրագույն ձգտումը*» (ընդգծումը մերն է-Ա.Փ.) [11]:

5. Շահիդներ. իմացյալ մահ, թե՞ կույր ինքնազոհում

Իսլամում նահատակությունը՝ *շահադան*, ամրագրված հայեցակարգ է, որ ներկայանում է որպես պայքարի և դիմագրավման ամենակատարյալ

¹ Աղանդը, որի հիմնադիրն էր Հասան իբն Սաֆֆահը, գործել է սկզբում Իրանում, ապա՝ Սիրիայում, XI-XIII դդ.:

² *Ֆիդայ* արաբերեն նշանակում է զոհ, *ֆիդայի*՝ ինքն իրեն զոհաբերող:

ձևը՝ վերահաստատելով հավատքը միակ աստծո նկատմամբ: *Ջիհադի* մեջ ներգրավված մարտիկը *մոջահիդն* է, իսկ նահատակվածը՝ *շահիդը*: Նահատակությունն բառը ծագում է *շահադա* կրոնական եզրույթից, որ նշանակում է հավատքի դավանում: *Շահադան* միաստվածության սկզբունքի հաստատումն է և արտահայտվում է «Չկա աստված ալլահից բարձր, և Մուհամմադը ալլահի առաքյալն է» բանաձևով: Նահատակ և հավատքի վկայություն բառերը նույն արմատից են ծագում: Այսինքն՝ *շահիդը* նա է, ով ճանաչել և ընդունել է իսլամը, չի վախենում մահվան գաղափարից և *ջիհադի* մեջ ներգրավվելով՝ զոհաբերում է ինքն իրեն:

Հիմք ընդունելով այս հայեցակարգը՝ մահմեդական ահաբեկիչները գաղափարախոսական և հոգեբանական պատրաստվածություն են անցնում: Քարոզչության արդյունքում հավաքագրվելով՝ *մոջահիդներն* աստիճանաբար սկսում են ինտեգրվել նոր միկրոկլիմայում և մեկուսանալով հասարակությունից՝ հրաժարվել ընդունված չափանիշներից: Նրանց չպետք է մտահոգի ապագայում իրենց սպասվող պատիժը, գործած արարքի գնահատականը և, վերջապես, մահվան գաղափարը: *Շահիդը* հոգեբանական պատրաստվածություն անցնելուց հետո պատրաստ է մահվան կամ ինքնասպանության, որը, սովորաբար, մատնանշում է տվյալ կազմակերպության արդեն հեղինակություն դարձած առաջնորդը:

Մահապարտների ինստիտուտի կենսունակությունն ապացուցեցին վերջին շրջանում տեղի ունեցած ինքնասպան գործողությունները՝ *մահապարտ-շահիդների*, ինչպես նաև *շահիդուհիների* մասնակցությամբ: Հետաքրքրություն է ներկայացնում շրջանառված այն տեղեկությունը, որ Ռուսաստանի տարածքում կանանց որպես *շահիդներ* օգտագործելը թույլատրել և երաշխավորել են Սաուդյան Արաբիայի կրոնական հեղինակությունները, իսկ գործնականում իրականացրել է Ռուսաստանի տարածքում գործող վահաբական միսիոներականությունը [12]: Մահմեդական ահաբեկիչները շատ հաճախ օգտագործում են անհասցե ահաբեկչությունը, հատկապես մարդաշատ վայրերում, որոնց զոհ են դառնում, շատ հաճախ, նաև իրենք:

Մահապարտ-շահիդների գոյությունը փաստում է մարդկային գիտակցության մեջ աստիճանաբար խորացող կրոնական մոլեռանդության մասին: Այս փաստն ի հայտ է բերում իսլամի նկատմամբ անհանդուրժողականության դրսևորումներ, քանի որ ահաբեկիչները հանդես են գալիս իսլամի անունից՝ մատնանշելով իրենց իսլամական ինքնությունը: Իրականում նրանք աղճատում են ինքնագոհաբերության իսլամական պատկերացումները: Իսլամը բացասական վերաբերմունք ունի ինքնասպան մահմեդականների նկատմամբ: Ասվածի ապացույցն է հադիսներում մարգարեին վերագրվող հետևյալ խոսքերը. «Նա, ով սպանի իրեն սայրով, տանջամահ կլինի այդ

նույն սայրով դժոխքի կրակներում... Նա, ով խեղդի իրեն, կխեղդվի դժոխքի կրակներում և ով խոցի իրեն, կխոցվի դժոխքում... Նա, ով որևէ կերպ սպանի իրեն այս աշխարհում, նույն կերպ կչարչարվի հարության օրը»:

Ուրեմն, անմեղ մարդկանց սպանած ահաբեկիչները մեղավորներ են իսլամի տեսանկյունից: Նրանց կարող է ուղղորդել Ղուրանը, որտեղ հավատացյալներին կոչ է արվում համագործակցել բարի և արժանապատիվ և ոչ թե չար ու անարդար գործերում: Սակայն ահաբեկիչների համոզմամբ՝ իրենք ոչ միայն չեն խախտում իսլամի սկզբունքները, այլև, որպես ճշմարիտ հավատացյալներ, ձգտում են կենսագործել իսլամի իդեալները: Նրանք ալլահի համար մարտնչող մոջահիդներ են, որ կոչված են մշտական պատերազմ վարել աշխարհի տարբեր հատվածներում իսլամի թշնամիների դեմ:

6. Ահաբեկչություն մահմեդականների դեմ

Ղուրանն արգելում է *ջիհադ* հայտարարել հավատքի եղբայրներին, անարգել նրանց պատիվն ու արժանապատվությունը, ինչպես նաև կապածի տակ առնել նրանց հավատքը, քանի դեռ աստված ահեղ դատաստանի օրը չի բացահայտել նրանց գործած մեղքերը: Սակայն մահմեդական ահաբեկիչները, հանդես գալով իսլամական արմատականության դիրքերից, պայքարում են նաև ներքին թշնամիների դեմ: Ներքին թշնամիներն այն մահմեդականներն են, որոնք, նրանց տեսանկյունից, խախտել են իսլամի սկզբունքները (*թաքֆիր*): Մահմեդական արմատականների համար ներքին խնդիրները հիմնականում ներառում են իսլամական պետություններում աշխարհիկ վարչակարգերի վերացումն ու իսլամական տիպի պետությունների ստեղծումը, քանի որ *շարիաթը* միայն աստվածապետության կողմնակից է: Նրանց կարծիքով՝ աշխարհիկ քաղաքականությունը հանգեցնում է իսլամական արժեքների անկմանը: Այդ վարչակարգերի ղեկավարները շատ դեպքերում մեղադրվում են կոռումպացվածության, հավատուրացության և Արևմուտքի հետ համագործակցելու մեջ: Քննադատության թիրախ կարող են դառնալ նաև արմատական վարչակարգերը՝ իսլամական իդեալներն իրականացնել չկարողանալու համար:

Իսլամական արմատականությունը դեմ է ամեն տեսակ նորարարությանը (*բիդա*) և արդիականացման գործընթացներին: Նրանք կոչ են անում վերադառնալ վաղ իսլամի ակունքներին՝ կյանքի բոլոր ոլորտներում առաջնորդվելով *շարիաթի* սկզբունքներով:

Ահաբեկիչները պատրաստ են *ջիհադ* հայտարարել իրենց պատկերացմամբ իսլամի սկզբունքները խախտած մահմեդականներին՝ նրանց դեմ նույնպես գործի դնելով ահաբեկչությունը:

Եզրակացություն

Բազմաթիվ արևմտյան ուսումնասիրողներ հակված են իսլամը դիտարկել որպես սպառնալիք քաղաքական, քաղաքակրթական և ժողովրդագրական տեսանկյունից: Համարվում է, որ իր ծրագրերի իրականացման համար իսլամը մասնավորապես օգտագործում է ահաբեկչությունը: Մինչդեռ ավանդական իսլամի հետևորդները, ինչպես նաև միջազգային իսլամական պաշտոնական շրջանակները, փորձում են հավաստիացնել, որ իսլամը որևէ կապ չունի ահաբեկչության հետ:

Հիմք ընդունելով իսլամի գաղափարական արժեհամակարգը՝ մահմեդական ահաբեկիչներն արդարացում են փնտրում հոգևոր տեքստերում: Իսլամական ահաբեկչությունը կարելի է դիտարկել որպես գործունեության մեթոդ, քաղաքական գործընթացների վրա ազդելու արդյունավետ միջոց: Այն ծայրահեղ մտայնության և կրոնական մոլեռանդության արդյունք է՝ ուղղված թե՛ մահմեդականների, թե՛ այլադավանների դեմ:

Այս տեսանկյունից՝ սխալ է աղերսներ փնտրել իսլամական ահաբեկչության և իսլամական դավանանքի միջև: Միևնույն ժամանակ չպետք է կարծել, թե միջնադարյան իսլամական հայեցակարգերը կենսունակ չեն ընդհանրապես: Դրանք կարող են կյանքի կոչվել քաղաքականության մեջ:

Միջազգային իսլամական ահաբեկչությունը, որ շատ դեպքերում քաղաքական պատվեր է կատարում, այսուհետև նույնպես կօգտագործի իսլամի կարգախոսները՝ պայքարելու այն ուժերի դեմ, որոնց գործունեությունը սպառնում է իսլամական քաղաքակրթությանն ու իսլամական ազգին:

Աղբյուրներ և գրականություն

1. *Bernard Lewis*, The Crisis of Islam. Holy War and Unholy Terror, New York, 2003, p. 137.
2. *Милославский Г.*, Интеграционные процессы в мусульманском мире, М., 1991, с.8.
3. Դուրանից մեջբերված այաթների տողացի թարգմանությունը՝ *Ա. Փաշայանի*:
4. Մեջբերումը՝ *Левин З.*, Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, М., 1972, с. 110.
5. The Mecca Declaration, The Islamic Summit Conference, Sixth Issue, Revised Edition, Kuwait, 1987, p. 47.
6. Նույն տեղում:
7. Մանրամասն տե՛ս *Փաշայան Ա.*, Զիհադ հասկացության և դրա մեկնաբանության հարցի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXII, Երևան, 2003, էջ 157-172:
8. *Հովհաննիսյան Ն.*, Արաբական երկրների պատմություն (Արաբները VII դարից մինչև 1516թ.), հ. I, Եր., 2003, էջ 57:
9. *Դուրվեն Մ.*, Իսլամն աշխարհում, Եր., 2004, էջ 209:

10. Այս մասին տե՛ս *Натрошвили Т.*, От Машрика до Магриба, М., 1978, с.10-11.
11. Մեջբերումը՝ Религиозно-политическая организация «Братья-мусульмане» в Египте. В кн.: Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, Ер., 1986, с.64.
12. *Сажин В.*, О некоторых особенностях современного международного терроризма, <http://www.iimes.ru> 04. 10. 2004. Վահաբական միսիոներականության մասին տե՛ս *Փաշայան Ա.*, Վահաբական քարոզչության մի քանի դրսևորումների շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Երևան, 2004, էջ 290-303:

Նոյեմբեր, 2004թ.

ИСЛАМ И ТЕРРОРИЗМ

Аракс Пашаян

Резюме

Часть исследователей рассматривает ислам как некий геополитический и цивилизационный вызов западному сообществу. Полагают также, что для реализации своих планов ислам использует, в частности, терроризм. Между тем представители традиционного ислама, а также международные исламские официальные круги доказывают, что ислам не имеет никакой связи с терроризмом.

Следует отметить, что исламский терроризм – результат радикального мышления, которым используется ислам в качестве идеологической системы ценностей для обоснования собственных действий. Это явление можно рассматривать как эффективный способ воздействия на политические процессы. Вместе с тем исламский терроризм направлен как против мусульман, так и против представителей других религий. Таким образом, было бы неправильно отождествлять исламский терроризм с исламским исповеданием.

Можно считать заблуждением то предположение, что якобы исламские традиционные концепции вообще вымерли. Они принимаются на вооружение в виде идеологии для решения конкретных задач. Международный исламский терроризм, выполняющий в большинстве случаев политический заказ, в дальнейшем также будет использовать исламские лозунги для борьбы с теми силами, деятельность которых угрожает исламской цивилизации.